

Բ. Ս. ՍԵՆՎԻՆԱՉՅԱՆ, Ծախսերի բաշխումը համակցված արտադրության բաղադրիչների միջև, ՀՍՍՀ ԴԱ հրատարակչություն, Երևան, 1971, 190 էջ

Հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման կարևորագույն ուղիներից մեկը հումքի համակողմանի և առավել լրիվ օգտագործման հետագա ընդլայնումն է։ Արդյունաբերության մեջ հումքի համալիր օգտագործման ընդլայնմանը զուգահեռ առաջնահերթ նշանակություն է ստանում համակցված արտադրություններում արտադրանքի տեսականների տնտեսական ճիշտ գնահատումը, որի անհրաժեշտությունն առավել հրատապ է պլանավորման և նյութական խթանման նոր համակարգի պայմաններում։

Համակցության բաղադրիչների տնտեսական ճիշտ գնահատումից, մասնավորապես բաղադրիչների միջև կապիտալ և շահագործման ծախսերի բաշխման մեթոդների հիմնավորվածությունից և ճշտությունից զգալիորեն կախված է նաև արտադրություններում կապիտալ ներդրումների, նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման տնտեսական արդյունավետության, հումքի համալիր օգտագործման ու թողարկվող արտադրանքի անվանակարգի հետագա բարելավման ճիշտ գնահատումը, այդ արտադրատեսակների գնագոյացման հետագա կատարելագործումը։

Այս առումով ուշադրավ է լեռնահանքային արդյունաբերության համակցված արտադրություններում բաղադրիչների միջև կապիտալ և շահագործման ծախսերի բաշխման պրոբլեմին նվիրված գրախոսվող ուսումնասիրությունը։

Ձևայած համակցված արտադրության բաղադրիչների միջև ընդհանուր ծախսերի բաշխման բազմաթիվ մեթոդների առկայությանը, տեսականորեն հիմնավորված և գործնականում կիրառման տեսանկյունից ընդունելի բաշխման հարցը վերջնականորեն լուծված չէ. պրակտիկայում համանման արտադրության պայմաններում, ինչպես ցույց է տրվում Բ. Սենվինաչյանի աշխատության մեջ, օգտագործվում են ծախսերի բաշխման տարբեր, երբեմն նույնիսկ միմյանց հակադիր մեթոդներ։

Արդյունաբերության տարբեր ճյուղերում (գունավոր և սև մետաղագործություն, հիդրոէներգետիկա, քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն և այլն) համակցության բաղադրիչների միջև ծախսերի բաշխման փորձից և դրականությունից հայտնի մեթոդների մանրակրկիտ քննարկման արդյունքում հեղինակը բացահայտում է դրանց դրական և թերի կողմերը։ Ծախսերի բաշխման այդ մեթոդները դիտարկվում են դրանք հիմնականում գունավոր մետաղագործության լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկություններում կիրառելու հնարավորության սահմաններում։

Համակցության Բաղադրիչների միջև ծախսերի բաշխման հիմքում ընկած հիմնական սկզբունքից ելնելով, աշխատանքում շահագործման ծախսերի բաշխման դիտարկված մեթոդները ուսումնասիրողը դասակարգել է երեք խմբերում. ա) արտադրանքի բնական բնութագրեր, բ) արտադրության կոնկրետ փուլում առանձին արտադրատեսակների կենդանի աշխատանքային ծախսումներ, գ) արժեքային ցուցանիշների վրա հիմնված ծախսերի բաշխման մեթոդներ:

Բ. Սելվինսոյանը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրի օգնությամբ լեռնահանքային արդյունաբերության համակցված արտադրության արտադրատեսակների միջև ծախսերի բաշխումը հանգեցնում է այնպիսի սխալների, որ դրանց օգտագործումը դառնում է անհնարին:

Լեռնահանքային ձեռնարկություններում արտադրանքի ինքնարժեքի ձևավորման ուսումնասիրությունը, ծախսերի հաշվառման գոյություն ունեցող կարգի և դրանց հետադա կատարելագործման ուղիների բացահայտումը հեղինակին բերել են այն հետևության, որ լեռնահանքային ձեռնարկություններում համակցված արտադրության ընդհանուր ծախսերը կարելի է բաժանել երկու խմբի. ա) ընդհանուր ծախսեր, որոնք վերաբերում են համակցության բոլոր Բաղադրիչներին կամ դրանց մի մասին, բ) հատուկ ծախսեր՝ արտադրանքի միայն առանձին տեսակների արտադրության կամ դրանց ապրանքային տեսքի բերելու համար: Աշխատանքում հանձնարարվում է արտադրանքի ինքնարժեքի հաշվարկներում հատուկ ծախսերն անմիջականորեն վերագրել առանձին արտադրատեսակներին, իսկ ընդհանուր ծախսերը համակցության Բաղադրիչների միջև համամասնորեն բաշխել տվյալ հոմեքից այդ արտադրատեսակներից յուրաքանչյուրի արտադրության համեմատական աշխատատարությունը:

Համակցության Բաղադրիչների միջև ընդհանուր ծախսերի բաշխման այս եղանակը հիմնավորված է գրախոսվող աշխատանքում և առարկությունների տեղիք չի տալիս: Ծախսերի բաշխման հանձնարարվող եղանակը, ի տարբերություն լեռնահանքային արդյունաբերությունում կիրառվող և մասնագիտական գրականության մեջ հանձնարարվող այլ մեթոդների, հնարավորություն է ընձեռում առավել լրիվ և ճիշտ արտացոլել համակցության Բաղադրիչներից յուրաքանչյուրի արտադրության համար կատարված ծախսումները:

Վերլուծելով համակցության Բաղադրիչների միջև կապիտալ ծախսերի բաշխման դրականությունից հայտնի մի շարք մեթոդներ, հեղինակը գտնում է, որ դրանք ղեկը չեն թերություններից և որ դրանց կիրառումը լեռնահանքային արդյունաբերությունում կարող է հանգեցնել հոմեքի համակցված օգտագործման ոչ ճիշտ արդյունքի: Աշխատանքում հիմնավորվում և լեռնահանքային արդյունաբերության համակցված արտադրություններում կիրառման համար հանձնարարվում է Բաղադրիչների միջև կապիտալ ծախսերի բաշխման նոր մեթոդ, որի հիմքում ընկած է համակցության առանձին Բաղադրիչների համեմատական կապիտալատարությունը:

Բացի վերոհիշյալից, դիտարկված են և բերվում են ուշագրավ հանձնարարություններ հիշյալ պոթելեմի հետ սերտորեն առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ (հաշվառման, ինքնարժեքի պլանավորման և վերլուծության հետագա կատարելագործում, լեռնահանքային արդյունաբերությունում գնագոյացման առանձնահատկությունների, հանրապետության լեռնահանքային ար-

ղյուճաբերութիւնում հոմքի կոմպլեքս օգտագործման հետագա խորացում և ալլն)։

Գրախոսվող գրքի ինքնարժեքի և գնագոյացման տեսական հարցերին ճշխրված բաժնեւէ կան վրիպումներ։ Այսպէս, օրինակ չի կարելի համասարութեան նշան գնել համեմատելի աշխատանքի (արդիւնքի) և շահույթի միշէ։ Եթէ տնտեսավարման նոր համակարգի պայմաններում որոշ ծախսեր շահույթի վրա են ընկնում ապա դա կատարվում է սոսկ շահույթի դերը բարձրացնելու և ոչ թէ անհրաժեշտ ու համեմատելի աշխատանքի (արդիւնքի) սահմանները ճշտելու համար։

Բավարար չի կարելի համարել համակցութեան բաղադրիչների միշէ ընդհանուր կոմբինատային ծախսերի բաշխման հիմնավորումը (էջ 140—141)։

Բավարար խորութեամբ չեն լուսաբանված գումարվոր մետաղագործութիւններում կապիտալ ներդրումների տնտեսական արդիւնավետութեան գնահատման հարցերը։ Այդ կարևոր խնդրի մի շարք կողմեր անհրաժեշտ պարզաբանում չեն ստացել։

Նկատվում են նաև առանձին անհարկի կրկնութիւններ ու շարահյուսական սխալներ։

Իր ամբողջութեամբ Բ. Սելվինազյանի «Ծախսերի՝ բաշխումը համակցված արտադրութեան բաղադրիչների միշէ» աշխատութիւնը արժեքավոր է և օգտակար ինչպէս գումարվոր մետաղագործութեան էկոնոմիկայով զբաղվողներին, այնպէս էլ մասնագետների լայն շրջանների համար։

Վ. Ե. ԽԼԻԱՅԱՆ

Տնտեսագիտութեան դոկտոր